

«Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի նորակազմ բառերի բառարան» (Ե., 2016, 154 էջ): - ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս է տեսել Ս. Վ. Համբարձումյանի Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի նորակազմ բառերի բառարանը» (խմբագիր՝ Բ. Գ. Թ. Ա. Ս. Գալստյան):

Անվանի բանաստեղծի լեզվին նվիրվել են զգալի թվով ուսումնասիրություններ (ատենախոսություններ, գիտական հոդվածներ և այլն), ժամանակակից հայերենի բացատրական բառարաններում տեղ են գտել նրա երկերից քաղված շատ բառեր՝ իբրև հեղինակային գործածություններ, սակայն հեղինակի երկի բառապաշարի նորակազմ բառերի ամբողջական և ստույգ բառարան կազմելը նոր փորձ է, և այս առումով աշխատանքը կարևոր է և գնահատելի:

Հայտնի է, որ Շիրազի չափածոյին ավելի քան բնորոշ է նոր բառերի գործածությունը, որոնք սովորաբար կոչվում են դիպվածային, առանց նկատի ունենալու այն, որ դրանք պայմանավորված են հեղինակի պատկերավոր մտածողությամբ, աչքի են ընկնում ոճական հագեցվածությամբ, ինչպես նաև յուրովի համալրում են ժամանակակից հայերենի ընդհանուր բառային կազմը: Այդ են վկայում, օրինակ, բանաստեղծի մյուս երկերից քաղված այն բառերը, որոնք արդի հայերենի բացատրական բառարաններում (մանավանդ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ում) ներկայանում են եզակի վկայակոչումներով:

Սույն բառարանը կարևոր է ոչ միայն տվյալ երկի բառապաշարի նորակազմ բառերին տեղեկանալու տեսանկյունից, այլև նոր գրական հայերենի ընդհանուր բառապաշարի համալրման իմաստով: Նրանում ճգրտվում են բազմաթիվ բառեր, որոնք այլ դեպքերում ներկայացված են եղել ոչ ստույգ վկայակոչմամբ կամ վրիպումներով, այլև լրացվում է այլ ուսումնասիրողների տեսադաշտից դուրս մնացած բառերով:

Բառարանն ունի ներածական մաս, որում մանրամասն ներկայացվում են «կազմության սկզբունքները և կառուցվածքը», ունի նաև համատողաբարությունների ցանկ: Հեղինակն անդրադառնում է նորակազմ բառերի տեսական բնորոշմանը, ներկայացնում այն սկզբունքները, որոնց գործադրմամբ պոեմում առանձնացվում են հիմնականում նոր կազմված, մասամբ նոր իմաստով կիրառված բառերը: Դրանք ընդհանուր առմամբ բանաստեղծի հեղինակային ոճին բնորոշ բառեր են, որոնց նորակազմ լինելը հիմնված է գործող բառարանների տվյալների հետ համեմատություն անցկացնելու սկզբունքի վրա: Համեմատության արդյունքում ստացվում են, մոտավորապես, երեք կարգի բառեր՝ բառարաններից ոչ մեկում գոյություն չունեցող, միայն Հովհ. Շիրազի այլ երկերից վկայակոչվող, այլև նրան ժամանակակից կամ

հետագա հեղինակների վկայաբերվող: Բառարանի հեղինակը կարողացել է այդ հիմնական սկզբունքի հետևողական կիրառությամբ հասնել լավ արդյունքի:

Հայտնի են բառարաններ և բառացանկեր, որոնցում այս կամ այն չափով և ճշգրտությամբ տեղ են գտել նաև անվանի բանաստեղծի այդ պոեմից բառեր: Ս. Համբարձումյանի այս բառարանում դրանք բերվում են ճշգրտումներով, անհրաժեշտ լրացումներով, ավելացվում են դուրս մնացածները: Վերջինիս մասին հեղինակը ներածության մեջ նշում է հետևյալը. «Այն բառերը, որոնք չկան հիշյալ բառարաններից և բառացանկերից որևէ մեկում, սկզբում ունեն աստղանիշ (*), այսինքն՝ առանձնացվում են առաջին անգամ. *ազգաջնջում, ազգապրուն, ազրահլվել, աթիլլան, ականջ-աջք...* և այլն (էջ 8)»: Նման մոտեցումը լիովին գիտական է, սակայն ուսումնասիրողից պահանջում է տևական և մանրակրկիտ աշխատանք, այն է՝ հրապարակի վրա եղած բառարաններով մեկառմեկ ստուգել տվյալ բառը, և նոր միայն վստահ լինել նրա նորակազմ լինելու մեջ:

Աշխատանքն անքի է ընկնում նաև մեկ այլ կողմով. բոլոր այն դեպքերում, երբ բառարանները տվյալ բառը կա՛մ վկայակոչում են Շիրազի մեկ այլ երկի վկայակոչումով, ինչպես նաև նրան ժամանակակից կամ ավելի ուշ հեղինակների անունով, կա՛մ առանց բնագրային օրինակների, տողատակին այդ մասին տրվում է համապատասխան ծանոթագրություն: Ըստ այդմ ավելի ստույգ է դառնում բառի հեղինակային պատկանելությունը, ճշգրտվում է կիրառության ժամանակը, ինչպես նաև լրացվում են բացատրական բառարաններում բնագրային վկայություն չունեցող բառերը: Բաքաքննական նման աշխատանք կատարվում է գրեթե յուրաքանչյուր բառի դեպքում, ժամանակակից հայերենի երեք խոշոր բառարանների համեմատությամբ:

Բառահոդվածներն ունեն հստակ կառուցվածք, դրանք ներկայացվում են քերականական նշումներով, համապատասխան բացատրություններով, բնագրային վկայություններով: Օրինակ՝ «ԱՍՏՎԱԾԱԿԱՆՁ. *ի . եր, գ. Աստծու կանչ. Աստծուն դիմելը, օգնություն հայցելը: Ծերունիների անեծքաձայներն աստվածականչի / Որ նման էին մերթ լացող մանկանց, մերթ մարդագոչի (էջ 285)»:*

Այս բառարանի նյութերը լիովին և վստահաբար կարելի է օգտագործել արդի հայերենի ընդարձակ բառարան կազմելու ժամանակ:

Վ. Գ. Հ.